

ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆԸ ՏԵՂԱՆՎԱՆԱԳԵՏ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Գ. Զահուկյանի լեզվաբանական ժառանգության մեջ տեղանվանագիտական հետազոտություններն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում: Դրանց հիմքում նախ՝ հայերենի և հնդեվրոպական, ապա՝ քարթվելական, սեմական հնագույն լեզուների փոխհարաբերությունների պարզաբանումն էր և հատկապես՝ մեր բնակության սկզբնական վայրերի ճշգրտումը, հնդեվրոպական միասնությունից հայերենի տրոհման ժամանակի որոշումը: Տեղանունների քննության միջոցով Գ. Զահուկյանն ամենից առաջ վերականգնում էր հայոց լեզվի պատմության նախագրային շրջանը, ճշգրտում հայերենի դիրքը և փոխհարաբերությունները հնագույն, գործածությունից հազարամյակներ առաջ դուրս եկած հնդեվրոպական լեզուների շարքում՝ ընդլայնելով հայերենի համեմատական քերականությունը: Ընդ որում, ինչպես նշում է գիտնականը. «Հայերենի և Բալկանյան թերակղզու ու Փոքր Ասիայի հնդեվրոպական հին լեզուների ոչ-ձագումնային զուգադիպությունների ուսումնասիրությունը խիստ կարևոր նյութ է տալիս ոչ միայն հայոց լեզվի, այլև հենց այդ լեզուների պատմության համար»¹:

Տեղանվանագիտական քննություններին Գ. Զահուկյանը ձեռնամուխ է լինում 20-րդ դարի 60-ական թվականներին՝ նախևառաջ սկսելով հայերենի և Բալկանյան թերակղզու ու Փոքր Ասիայի հին լեզուների փոխհարաբերությունների ճշգրտումից: 1961-64 թթ. նա խորամուխ է լինում հայագիտության համար կարևորագույն այնպիսի խնդիրների բացահայտմանը, ինչպիսիք են հայերենի և ուրարտերենի, ապա հայերենի և հայասերենի ձագումնաբանական ընդհանրությունների վերհանումը՝ ընդգծելով այն խոր ազդեցությունը և ցեղակցական, ժառանգորդական կապը, որ ունեցել են հայասերենը և ուրարտերենը հայկական հատկանվանացանկի վրա:

1967-1970 թթ. նա արդեն ուսումնասիրում է հայերենի և իլիրերենի, հին մակեդոներենի, թրակերենի, պելասգերենի, փոյուգերենի, խեթերենի (հեթիթերենի), լուվերենի, պալայերենի, լիկերենի, լիդիերենի փոխհարաբերության հարցերը, և քանի որ այդ լեզուները հիմնականում վկայված են հատուկ անուններով՝ անձնանուններ, դիցանուններ, տեղանուններ, ապա դրանց ստուգաբանական հետազոտությունը և հայերենի հետ հնարավոր ընդհանրությունների բացահայտումը դառ-

¹ Գ. Բ. Զահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 164:

նում են վճռորոշ: Տեղանունները դառնում են այն բանալին, որի միջոցով բացվում են հայերենի կազմավորման վաղնջական ընթացքի գաղտնի դռները, վերականգնվում են հայերենի մեջ մասամբ ձուլված լեզուները և դրանց կրող ժողովուրդների մշակույթները: Այս բոլոր ուսումնասիրությունները սկզբում առանձին հոդվածներով տպագրվել են տարբեր գիտական հանդեսներում 1967-1968 թթ.²: 1970 թ. այս հետազոտությունները ճշգրտումներով և հավելումներով ի մի են բերվում մի աշխատության մեջ «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները», որտեղ փաստական հարուստ նյութի հիման վրա Գ. Ջահուկյանն ապացուցում է իր այն դրույթը, թե հնդեվրոպական հին լեզուների մասնագետների համար հայերենը եղել և մնում է համեմատության կարևոր եզրերից մեկը, որովհետև բառային, հնչյունական, քերականական զուգաբանությունները մեր և հնդեվրոպական հնագույն լեզուների միջև զգալի են: Բառահնչյունական զուգադիպումների քննության ժամանակ գիտնականը տարբերակում է ծագումնային (հնդեվրոպական ընդհանուր նախալեզվից եկող) և ոչծագումնային շերտեր, վերջիններիս համար ևս առանձնացնում է երկու շերտ. «Պետք է տարբերել ոչ-ծագումնային զուգադիպումների երկու շերտ՝ ենթաշերտային (սուբստրատային) ազդեցությամբ բացատրվող ընդհանրություններ և փոխառություններ (անմիջական և միջնորդավորված): Մրանց հստակ տարբերակումը առայժմ հնարավոր չէ»³: Չեն մոռացվում նաև հայերենի և ոչ հնդեվրոպական լեզուների հնագույն կապերն ու հարակցությունները:

Այս հետազոտության մեջ Գ. Ջահուկյանը հանգում է հետևյալ կարևոր եզրակացության. «...մեր իմացության գլխավոր աղբյուրը (*խոսքը վերաբերում է վաղնջական շրջանի պատմությանը*- Ն. Դ.) հատուկ անուններն են, որոնցից համեմատաբար վստահելի են աշխարհագրական անունները. անձնանուններն ավելի քիչ են վստահելի՝ շնորհիվ իրենց շրջիկության և հեշտ փոխառելիության»⁴:

Գ. Ջահուկյանի տեղանվանագիտական դիտարկումների յուրօրինակ ամփոփումը կարելի է համարել 1987 թ. լույս ընծայված «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» կոթողային աշխատությունը, որտեղ գիտնականն առանձին քննության է ենթարկում բնիկ հայկական տեղանունները դասակարգելով դրանք ըստ կառուցվածքի և իմաստային հիմնական բաղադրիչների, ապա փոխառյալ տեղանունները: Տեղանունների քննությունը կատարվում է օտար և հա-

² Տե՛ս «Հայերենի և ինթա-լուվական լեզուների բառային կազմի ծագումնային զուգադիպումները», 1967, ՊԲՀ, № 4, «Հայերենը և փոյուգերենը», ՊԲՀ, 1968, № 2, «Հայերենի բառապաշարի ինթա-լուվական տարրերը», «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 2, «Հայերենը և թրակերենը», նույն տեղում, 1968, № 2, «Հայերենը և պելասգերենը», «Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, № 7, «Հայերենը և հին մակեդոներենը», նույն տեղում, 1968, № 8:

³ Գ. Բ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 167:

⁴ Նույն տեղում, էջ 8-9:

յագգի գիտնականների կարծիքների մանրակրկիտ համադրմամբ, ժամանակակից հնդեվրոպաբանության և ընդհանուր լեզվաբանության նվաճումների հիմքի վրա: Գ. Ջահուկյանը զարգացնում և նոր մակարդակի է բարձրացնում տեղանունների քննության և ստուգաբանության՝ Ն. Ադոնցի և հատկապես Գ. Ղափանցյանի առաջադրած սկզբունքները՝ էապես նպաստելով հայկական տեղանվանագիտության իբրև ինքնուրույն գիտակարգի զարգացմանը:

Մեծ լեզվաբանը ստուգաբանել է շուրջ հարյուր տեղանուն՝ երկրանուն, գավառանուն, գետանուն, լեռնանուն, բնականուն՝ իրենց տեղանվանահիմքերով և ածանցային մասնիկներով, գտել դրանց զուգահեռները ցեղակից լեզուներում, ինչպես օրինակ՝ *Անգեղատուն, Ամբերդ, Աղձնիք, Արարատ, Արագած, Արաքս, Երասխ, Ախուրյան, Աղստև, Ալաշկերտ, Բուրանիա, Գառնի, Գեղարքունիք, Դվին, Դերջան, Ծովք, Կուր, Մալաթիա, Մուշ, Սասուն, Միսական, Վան, Տարոն, Տոսպ* և այլն:

Մեր այս քննության նպատակն է ներկայացնել և արժևորել հայոց պատմության համար հանգուցային նշանակություն ունեցող մի շարք տեղանունների՝ Գ. Ջահուկյանի առաջարկած մեկնությունները և զուգահեռները: Տեղանվանական ստուգաբանությունները ներկայացնում ենք՝ առանձնացնելով նախ հայերի ժողովրդանուններին առնչվող վերլուծությունները: Արժանին մատուցենք Գ. Ջահուկյանին. նա առաջինն էր, որ համախմբեց հայոց ժողովրդանունների ստուգաբանության գիտական և անգամ առասպելական տարբերակները՝ շատ անգամ առաջադրելով ստուգաբանության իր վարկածները, որովհետև համոզված էր՝ հայերի անվանումները սերտորեն կապված են մեր բնակության նախնական վայրերի պատմության հետ, և դրանց մեկնությունը հնարավորություն կտա առավել ճշգրիտ որոշելու հայերենի՝ իբրև ինքնուրույն հնդեվրոպական լեզվի գոյության ժամանակը, մեր լեզվամտածողության հիմքը⁵:

Հայ-մակեդոնական բառային զուգադիպումների քննության ժամանակ Գ. Ջահուկյանը, թեև կասկածելի, բայց առանձնացնում է մակեդոնական քաղաքանուն *Օրմա*-ն՝ կապելով այն մեր հիմնական ժողովրդանվան հետ. *Օրմա* > *Urme* > *Armen* > *արմեն* հնչյունական անցումներով⁶: Այնուհետև մեր այս **Արմեն** ժողովրդանվանը, որից ունենք **Արմենիա** երկրանունը, **Արա** անձնանուն-դիցանուն-տեղանունը, Գ. Ջահուկյանն անդրադառնում է հայ-փոյուզիական ընդհանրությունների քննության ժամանակ՝ այն արդեն առնչելով *ἀρμάν* «կռիվ» բառի հայցական հոլովածնի հետ, որն էլ համադրելի է հ.-ե. **er-* «շարժվել, շարժել, հուզել, բարձրացնել» արմատի հետ, վերջինից էլ ծագում է հունական *ἀρμενος* ձևը՝ «շարժվող» իմաստով: Այսինքն՝ **արմեն** ցեղանունը, ինչպես նաև

⁵ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 279-292:

⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 42:

Արա անձնանունը նախապես նշանակել են «կովոդ, շարժվող» ազգ և անձ, մի հատկանիշ, որի միջոցով հնդեվրոպական այլ ցեղերը ճանաչել և բնորոշել են արմեններին⁷:

Ավելի ուշ **Գ. Ջահուկյանը** առաջարկում է **արմեն** ժողովրդանվան այլ ստուգաբանություն՝ արդեն զուտ հայերեն արմատի միջոցով: Ըստ այդմ՝ **արմեն** անվանումը ստուգաբանորեն կապվում է **արմ(ն)** «արմատ», **գ-արմ** «ցեղ, սերունդ», **արմատ** «արմատ, ցեղ, զարմ, հիմք» (հմմտ. *Armatana* տեղանունը) բառերի հետ և գալիս է հ.-ե. **er-* արմատի **ormenos* ածանցյալից: Ջահուկյանի համոզմամբ, հայերեն բառերին կազմությամբ, ձևով և իմաստով հատկապես մոտ են հունարեն *ἀρμενος* «ցողուն, ընձյուղ», գերմաներեն *ermana* «մեծ», սլավոնական *raměno* «ուժեղ, հզոր» արմատները: Հայկական **արմ** բառը գիտնականը զուգահեռում է նաև ուրարտական *armuzj* «ընտանիք» բառի հետ⁸՝ առաջ քաշելով նրանց ընդհանուր հայկական ծագման վարկածը: **Գ. Ջահուկյանին** իբրև գիտնականի, բնորոշ էր մի ուշագրավ հատկանիշ. նա երբեք կանգ չէր առնում մի տեսակետի կամ ստուգաբանության վրա, պարբերաբար անդրադառնում էր իր արդեն քննած իրողություններին՝ ամեն անգամ նորովի բնութագրելով դրանք, չխուսափելով նախորդ վարկածների սրբագրումից:

Հայ-փոյուզիական զուգաբանություն է համարվում նաև հայերի համար սրբազան գետի՝ մայր Արաքսի կամ Երասխի անվանումը *Αραξή*, որի բառային իմաստը ենթադրաբար «գետն» է⁹: Արաքս/Երասխ տեղանվան դեպքում հայագետը գտնում է դրա ոչ միայն փոյուզիական, այլև թրակյան նախատիպը *Αραζος*, *Arason*՝ նույն ստուգաբանությամբ:

Տեղանվանական զուգաբանությունների ամենամեծ քանակը բաժին է ընկնում հայերենին և թրակերենին, ընդ որում, թրակյան և փոյուզիական բառային-հնչյունական ընդհանրությունները հայերենի հետ գիտնականը հաճախ քննում է փոխադարձ կապի մեջ: **Գ. Ջահուկյանը** համաձայնում է Վ. Գեորգիևի այն տեսակետին, որ զուգաբանությունների վերհանման դեպքում պետք է առանձնացնել բուն թրակերենը և դակա-միզիերենը, վերջինս էլ նույնացնում է մուշկերենի հետ *μύσοι* – *μύσχοι*: Իսկ հայերենում տարբերակում է բառային ազդեցությունների երկու շերտ՝ փոյուզիա-հայկական և թրակյան կամ միզիական¹⁰: Չուգահեռականություն է հաստատվում թրակյան իգական *Αμασιαχίς* անվան և հայկական արական *Ամասիա* անվան միջև, որից Մ. Խորենացին բխեցնում է *Մասիս* լեռնանունը, բայց **Ջահուկյանն** այս շարքում հիշատակում է նաև հրեական թագավոր Ամասիային, որի անունը հրեերեն

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 117:

⁸ Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 287-288:

⁹ Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 116:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 47:

ստուգաբանվում է *amš* «հզոր» և *Jāh* «Եհովա» բաղադրիչներով: Ուստի վերոհիշյալ զուգաբանությունը բերվում է թեականության երանգով¹¹:

Մեր մայրաքաղաքներից **Դուին** անունը զուգադրվում է թրակյան *Δούσιον / Δάσιον* տեղանվան հետ, որի համար վերականգնվում է հնդեվրոպական *dheu-* «բարձրանալ, ոլորվել» արմատը. վերջինիս իմաստային զարգացումն է հին անգլերեն *dūn* «բարձունք, բլուր, լեռ» բառը¹²:

Մուշ տեղանունը, որը նաև անձնանուն է, ստուգաբանվում է թրակյան ցեղանվան միջոցով՝ *Μούσις, Μύσις, Μύσιας*¹³: Սակայն մեկնության այս տարբերակի հետ մեկտեղ, Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում **Մուշ**-ը ստուգաբանել հայոց ժողովրդանուններից մեկի միջոցով. հայտնի է, որ վրացիները մեզ կոչում են *սուխու* և այդ *սեխու*-ը կապվում է *մուշկ* ցեղանվան հետ. նշված տեղանունը լայնորեն վկայված է նաև ուրարտական և հունական աղբյուրներում՝ ուրասերեն՝ *Muškini*, հունարեն՝ *Μόσχοι* տարբերակներով:

Կարս տեղանունը կապվում է *Carsion, Corsium, Καρσος* թրակյան քաղաքանվան հետ, որն ունի նաև անձնանվան արժեք՝ *Καρσις* տարբերակով, այն բխեցվում է հնդեվրոպական **kers-* «ակոսել, ակոս քաշել» արմատից: **Կարս**-ի *ս-*ն, ըստ Ջահուկյանի, ավելի ուշ սկսել է գիտակցվել որպես հայցականի հոգնակերտ և բառը հոլովվել է Կարուց ձևով¹⁴:

Հարանդ տեղանունը, որը գավառանուն է Սյունիքում և Արցախում, կապվում է դարձյալ թրակյան ցեղանվան հետ՝ *Ἀβαντες*:

Մալաթիա տեղանունը դեռևս Դ. Դեչևն էր կապում թրակյան *Melta* տեղանվան հետ, որի տարբերակներն են *Meletinus, Μελιτηνή*, իսկ ասուրբաբերլոնական համարժեքն է *Melidu*: Ջահուկյանն ապացուցում է հնչյունական այս անցումների հավաստիությունը¹⁵:

Տարոն գավառանունը, որը միաժամանակ նաև գետանուն է, բխեցվում է թրակյան և էտրուսկյան անձնանունների բաղադրիչներից, որոնք ունեն տարբեր հերթագայություններ՝ *ταρσσο-ταρις-tarus*. այս անունը կրող վայրի տեղադրությունը համընկնում է ուրարտական արձանագրություններում հիշատակված *Tarauna* երկրի հետ: Տեղանվանահիմքը բխեցվում է *հ.-ե.* **dō-ro, de-ro* «նվեր» արմատից, որից էլ հայերենում ունենք *սուր-ք* բառը¹⁶:

Միսական տեղանունը, Ջահուկյանը զուգահեռում է մակեդոնական *Sakos* տեղանվան հետ՝ երկուսն էլ համարելով ցեղանունից ծագած¹⁷: Փաստորեն Գ. Ջահուկյանը, հետևելով Ն. Ադոնցի և Գ. Ղափանց-

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 68:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 77:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 42:

¹⁴ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 77:

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 78:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 78:

յանի տեսակետներին, խոշոր բնականուճների համար առավել ընդունելի է համարում ցեղանուններից ծագած լինելու տարբերակը, այսինքն՝ գավառները, նահանգները և երկրամասերը, որպես կանոն, անվանակոչվել են դրանցում բնակվող հիմնական ցեղերի ու ժողովուրդների անուններով:

Հայ-փոյուզիական ընդհանրությունները հնդեվրոպաբաններին գրադեցրել են մշտապես: Այս առումով ձևավորվել է երեք մոտեցում. առաջինի կողմնակիցները՝ Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն, Յ. Մարկվարտը, Հ. Պեդերսենը, Հ. Տաշյանը և Հ. Աճառյանը, ժխտում էին հայ-փոյուզիական մերձավոր ցեղակցությունը, իսկ երկրորդները, որոնց թվում ոչ նվազ հեղինակություն վայելող լեզվաբաններ են՝ Ջ. Բոնֆանտեն, Վ. Գեորգիևը, Ի. Դյակոնովը, Վ. Բենեցանուն, հակված էին մերձավոր ցեղակցություն տեսնելու հայերենի ու փոյուզերենի միջև՝ ընդհուպ մինչև բարբառային մերձավորության աստիճան: Երրորդ տեսակետի ձևավորողը Օ. Հասան էր, որը, ուսումնասիրելով փոյուզերենի և հայերենի հնարավոր հարաբերությունները, հանգում է այն կարծիքին, որ հայերենը մերձավոր ցեղակից է նախափոյուզերենին: Նախափոյուզերենի մնացորդները, Հասանի համոզմամբ, պահպանվել էին Փոյուզիայի ծայրամասերում՝ հատկապես հարավ-արևելքում, հենց այնտեղ, ուր հայերը հարևան էին փոյուզիացիներին: Տեղանունների մակարդակում հայ-փոյուզիական առնչությունները, սակայն, շատ ավելի քիչ են, քան թրակերենի պարագայում. ուշագրավ ստուգաբանություններից վերն արդեն նշեցինք **Արաքս** գետանվան թրակա-փոյուզիական զուգաբանությունը, որ գտել էր Գ. Ջահուկյանը:

Հայ-խեթական ընդհանրություններին անդրադառնալով՝ Գ. Ջահուկյանը կարծում էր. «Եթե ճիշտ է այն վարկածը, որ հայերենի բուն կրողները՝ արմենները, Փոքր Ասիայում մասսայաբար երևացել են փոյուզիական ցեղերի հետ մ. թ. ա. XII դարի մոտերքը, ապա խոսք կարող է լինել ոչ թե բուն խեթական ժողովուրդների, այլ խեթական պետության կործանումից հետո այդ ժողովուրդների մնացորդների հետ հայերի ունեցած տևական շփման մասին»¹⁸: Այսինքն՝ հայ-խեթական բառային ընդհանրությունների հիմնական մասը պետք է լինի հայ ժողովրդի մեջ ձուլված խեթա-լուվական հատվածների ենթաշերտային ազդեցության արդյունք: Գ. Ջահուկյանը կարծում էր, որ հայասերենը ևս ցեղակցորեն կապված է խեթա-լուվական լեզուների հետ, և փորձում էր հայասական շերտ վերականգնել հայերենում՝ իբրև բնիկ տարր: Ըստ էության այս կարծիքին էին նաև Գ. Ղափանցյանը և Ն. Ադոնցը: Խեթա-լուվական ենթաշերտային տեղանուններից հիշատակենք Արմավիր-ը, որը Գ. Ջահուկյանը բխեցնում է *Arma* «լուսին, լուսնաստված» անունից¹⁹: Ամասիա-ն համադրում է խեթերեն *hamasa-s* «թոռ» բա-

¹⁸ Նույն տեղում, էջ 146-147:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 161:

ոի հետ²⁰՝ այս ստուգաբանությունը համարելով առավել հավանական, քան վերը նշված թրակյան կամ հրեական բացատրությունները:

Չուտ հայասական ծագման տեղանվանակերտներից Գ. Ջահուկյանն առանձնացնում է *aša* մասնիկը, որը համարում է հայկական *-ա-կան* ածանցին հումանիշ մասնիկ, որը խեթա-լուվական լեզուներում կազմում է սեռական հոլովին զուգահեռ ստացական ածականներ, ուստի **Հայասա** տեղանունը նշանակում է՝ *հայ-ական*²¹: Հայկական տեղանուններում հանդիպող **առիճ/առինջ** բաղադրիչը ևս նա համարում է հայասական՝ բացատրելով այն «տանել» կամ «խլել» խեթա-լուվական արմատներով, թեև չի բացառում Հ. Աճառյանի բացատրությունը հայկական արմատի միջոցով՝ **առիճ/առինջ** > «տուն, շեն» իմաստներով²²:

Հայ-ուրարտական տեղանվանական ստուգաբանություններից նախ առանձնացնենք տեղանվանակերտ ածանցները, որոնք հայերենը ժառանգել է ուրարտերենից՝ *ունի*-ն և *ունիք*-ը, երկուսն էլ հին շրջանում գործուն տոհմանվանակերտ ածանցներ էին՝ սահուն տեղանուն դարձող: Ջահուկյանը գրում է. ««Աշխարհացույց»-ում հանդիպող ունի-ով տեղանունները և մասնավորապես գավառանունները կենտրոնացած են հին Ուրարտուի տարածման հիմնական վայրերում՝ Վասպուրականում՝ *Բոզունիք* (հմմտ. Բուզունիք նախարարական տոհմանունը), *Բուժունիք*, *Երուանդունիք*, *Կրճունիք*, *Մեծնունիք*, *Պալունիք*, *Պարսպատունիք*, *Վարաժնունիք*, *Տրպատունիք*, Տուրուբերանում՝ *Ապահունիք*, *Ասպակունիք*, *Արշամունիք*, *Խորխոռունիք*, Այրարատում՝ *Արշարունիք*, *Հանունիք*, *Վարաժնունիք*, այլև Կորձայքում՝ *Կարթունիք*, Սյունիքում՝ *Գեղարքունիք* (հմմտ. հենց *Սյունիք*), Արցախում՝ *Վայկունիք*: Բավականին շատ են հիմնականում նախարարական այն տոհմանունները, որոնք կապված չեն «Աշխարհացույց»-ում բերված տեղանունների հետ: Սրանց մեջ առկա են իրանական ծագման հիմքեր (իրանական տարրի ազդեցությամբ ուրարտական անվան ձևափոխություն ունենք, ըստ այդմ էլ՝ *ունի*-ի հետագա տարածումը երաշխավորված էր – Ն. Դ.)՝ *Բագրատունի*, *Պահլավունիք*, *Տրդատունիք*, *Վազրասպունիք* և այլն»²³: Ջահուկյանն իրավացիորեն նշում է, որ *ունի*-ով մեր գավառանուններից շատերը ուշ շրջանի կազմություններ են, համաբանություններ կամ հին շրջանի անունների ձևափոխություններ՝ *Վահնունի*, *Տրունի*, *Որդունի*, *Սահակունի*, *Մաղխագունի* և այլն: Մեծ լեզվաբանը ուրարտական ներդրում է համարում նաև *-եան* տեղանվանակերտը, որը երբեմն կարող էր զուգակցվել *-ք* հոգնակերտ-տեղանվանակերտի հետ՝ *Աբեղեան/ք*, *Ախուրեան*, *Բասեան*, *Խորձեան*, *Հաշտեան*, *Գաբեղեան/ք*:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 162:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 331:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 337:

²³ Նույն տեղում, էջ 442:

Հայկական «հովիտ» բառի համար, որը գործուն տեղանվանակերտ է, Ջահուկյանը նույնպես ենթադրում է ուրարտական ծագում՝ *hubi*, ուստի հայերենի **հովիտ** բաղադրիչով տեղանունները (հատկապես գավառանունները) հիմնականում պետք է ուրարտական շրջանից եկած լինեն և ընդհանուր հայ-ուրարտական ծագում ունենան: Այդպիսի տեղանունները բավական մեծաթիվ են, բերենք օրինակներ. Վասպուրականում՝ *Աղի-ովիտ*, *Արճիշակ-ովիտ*, *Կոզ-ովիտ*, Մոկքում՝ *Արգաստ-ովիտ*, Ծովքում՝ *Բալա-հովիտ*: Հիշյալ տեղանունների ուրարտական ծագումը Ջահուկյանը հաստատում է նաև նրանց աշխարհագրական դիրքի միջոցով, այսպես՝ *Աղիովիտ*-ը տեղադրմամբ համապատասխանում է ուրարտական *Alia*-ին, որից ունենք Աղի գետանունը, ուրարտական *Turasini hibi*-ին հայկական *Տուրաձատափն* է: Գիտնականը եզրակացնում է, որ *Արգաստ-ովիտ* տեղանվան առաջին բաղադրիչը գալիս է *Argišti* անունից, նույն *Argišti*-ն էլ ենթադրվում է Արճեշ քաղաքի մեջ²⁴:

Գ. Ջահուկյանը ուրարտական ծագում է վերականգնում նաև **Գառնի** հնագույն տեղանվան համար, որը բխեցվում է *garini* «բերդ, ամրոց» բառից:

Կիմերերենի և հայերենի առնչություններին անդրադառնալով՝ հայագետը նշում է, որ *kimmer-* անվանումն այդ ժողովրդի ինքնանվանումն է եղել, որն այնուհետև տարածվել և ընդհանրացել է շրջապատող ժողովուրդների լեզուներում: Այս ժողովրդանվան հետ տարբեր ժամանակներում կապել են Կապադովկիայի հին հայկական *Գամիրք* անունը, որն էլ կարող է ծագած լինել աստվածաշնչյան *Gamer/Gomer* անունից: Ջահուկյանի կարծիքով, կարելի է կապ տեսնել կիմերների և *Կումայրի* > *Գյումրի* տեղանվան միջև, թեև նշում է, որ Գր. Ղափանցյանի ստուգաբանության տարբերակն ավելի հավանական է դիտվում. «...սակայն ավելի շատ հակում կա *Կումայրի*ի –այր- բաղադրիչը նույնացնել հայ. *այր* «քարայր, քարանձավ» բառի հետ, իսկ *Կում*-ը Առաջավոր Ասիայի մի շարք տեղանունների *kum* բաղադրիչի հետ և վերջինիս ակունքը փնտրել խոտերենում»²⁵: Գիտնականին *Կումայրի*-ի կիմերների անվան հետ կապն առավել համոզիչ է թվում հատկապես այն պատճառով, որ *Շիրակ* տեղանունը համապատասխանաբար կարող է բացատրվել սարմատական *սիրակ* (σῖρακ=շիրակ) ցեղի անվամբ, որի ներկայացուցիչները, ըստ որոշ աղբյուրների, կիմերների կազմում են եղել:

Ընդհանրացնելով վերը բերված տեղանունների ստուգաբանության և նախնական հնարավոր ձևերի վերականգնման Գ. Ջահուկյանի տեսակետների վերաբերյալ մեր ասելիքը՝ պետք է նշել, որ մեծ գիտնականը միշտ եղել է բավական զգուշավոր, խուսափել է միանշանակ և պարզունակ պնդումներից ու բացատրություններից: Ընդհանուր լեզվաբանության և հնդեվրոպաբանության խնդիրներով զբաղվող հայա-

²⁴ Տե՛ս նույն տղը, էջ 442-443:

²⁵ Նույն տեղում, էջ 495:

գետը առաջնորդվել է տարբերակային մոտեցումների գերակայության սկզբունքով, նույն տեղանվան կամ տեղանվանակերտ մասնիկի համար հնարավորինս շատ զուգաբանություններ մատնանշելու ձգտմամբ: Այդ բազմաշերտ զուգաբանությունների համադրություններից էլ ծնվել են նրա ստուգաբանական տարբերակները՝ հիմնավորված փաստական հարուստ նյութով և այլ լեզվաբանների տեսակետների վկայակոչմամբ, որն էլ դրանց բարձր գիտականության առհավատյան է:

Բանալի բառեր – *Գ. Ջահուկյան, տեղանվանագիտական հետազոտություններ, ստուգաբանություններ, հայ-մակեդոնական, հայ-թրակյան, հայ-փռյուզիական, հայ-խեթական, հայ-ուրարտական և հայասական տեղանվանական զուգաբանություններ*

НАРИНЕ ДИЛБАРЯН – Топонимические исследования Г. Джаукяна. – В лингвистическом наследии Г. Джаукяна исследования по топонимике занимают особое место. Работая над ними, учёный выявлял связи армянского языка с другими индоевропейскими, а также иберо-кавказскими и семитскими языками, научно обосновывал первичные места обитания праармян и время отделения армянского языка от индоевропейской общности. Опираясь на топонимику, Г. Джаукян реконструировал язык дописьменного периода, заложил основы сравнительной грамматики армянского языка. Он истолковал более ста армянских топонимов, указал, как они соотносятся с древними индоевропейскими языками Балкан и Малой Азии, и обнаружил родственную связь между армянской, урартской и хайасской ономастикой.

Ключевые слова: *Г. Джаукян, топонимические исследования, толкования, армяно-македонские, -фракийские, -фригийские, -хеттские, -урартские топонимические изоглоссы*

NARINE DILBARYAN – G. Jahukian's Toponymic Research. – Jahukian's toponymic research occupies a special place in his linguistic heritage. In the basis of these works the talented scientist put in the first place the question of identifying the degree of relationship and other Indo-European languages, as well as the Ibero-Caucasian and Semitic ancient languages, the scientific substantiation of our ancestral home, the primary places of habitation, the period of separation of the Armenian language from the Indo-European community. With the help of toponymic research Jahukyan primarily restored the preliterate period of the Armenian language and formed the basis of the comparative grammar of the Armenian language. He interpreted more than 100 Armenian place names, indicating their relationship with the ancient Indo-European languages of the Balkan Peninsula and Asia Minor. Especially important is his toponymic research, which revealed a close relationship between the Armenian, Urartian and Hayassian onomastics.

Key words: *G. Jahukyan, toponymic research, interpretation, Armenian-Macedonian, Armenian-Thracian, Armenian-Phrygian, Armenian-Hittite, Armenian-Urartian and Hayassian toponymic isoglosses*